

կ'արտայայտէր, քարոզուած՝ քրիստոնէական ամբողջ աւանդութենէն⁶:

Հասած էր ժամը որ Տիեզ. Ժողովին ուսուցումը՝ ինչքերու մասին՝ սկսէր անոնց «Հասարակաց» սահմանումէն⁷: Ասիկա պէտք է յարգուի միշտ, ինչ որ ալ ըլլան սեփականութեան այլեւայլ ձեւերը՝ Ժողովուրդներու օրինաւոր բարքերուն համաձայն (Հմմտ. Հմ. 69): Ուստի, հոս ալ լուրջ պատասխանատուութիւն մը կը կանգնի պետութիւններուն առջեւ՝ ձեռք առնելու ամէն օրինաւոր միջոց, անհետացնելու համար թշուառութիւնը, աւելի ողջամիտ ընթացք մը տալու՝ ինչքերու բաշխումին, եւ զարգացնելու ընկերային ապահովութեան միջոցները, որոնք մեծապէս կրնան սատարել զործնական արդիւնքներու հասցընելու ինչքերու հասարակաց յատկացումը:

Է) Այս հեռանկարին մէջ՝ անհատական ստացուածքի իրաւունքն ալ նոր իմաստ մը կը ստանայ: Բացի անհատին կամ իւրաքանչիւր ընտանիքի նկատմամբ կատարած դերէն, ընկերային դեր մըն ալ կը ստանձնէ. եւ այս՝ երկու տեսակէտներէ:

1° Այնու որ իւրաքանչիւր մարդու օրինաւորապէս ստացած բարիքները սահմանուած չեն միայն իր անձին եւ ընտանիքին,

նիքին, այլ նաեւ պարտականութիւն կը դնեն անոր վրայ՝ իր կարելիութեան եւ ուրիշին կարիքներուն չափով՝ օգնելու իր մերձակորին: Եղբայրսիրութիւնն ու ողորմածութիւնը, որոշ սահմաններու մէջ, նաեւ արդարութեան պարտականութիւն մը կը դառնան. արդարութիւն՝ որուն ախօր կը տրուի յաճախ «ընկերային արդարութիւն» կամ պարզապէս «équité» յորջորջումը:

2° Ընկերութեան մը մէջ, ուր ինչքերու բաշխումը կը հասնի ողջամիտ հաւասարութիւն մը ձեւացնելու, անհատական ստացուածքը՝ ինչքերու հասարակաց յատկացումին իրականացման ամէնէն զործնական արտայայտութիւններէն մէկը կ'ըլլայ:

Ժողովի անտեսա-ընկերային ուսուցումը՝ որ կը շօշափէ տակաւին ուրիշ զանազան հարցեր, կը փակուի Քրիստոսի անունով. «Ու՛ր հաւատարմօրէն կը հետեւի Քրիստոսի, ամէն բանէ առաջ՝ Աստուծոյ Թագաւորութիւնը կը փնտռէ. ասիկա աւելի հզօր եւ աւելի մաքուր սէր մը կ'արծարծէ անոր մէջ՝ օգնելու համար իր եղբայրներուն, եւ կատարելու արդարութեան պարտականութիւնները՝ սերէն ներշնչուած» (Հմ. 72):

(Շար. 5)

Հ. ԼԵՒՈՆ ԶԵՔԻՆԱՆ

ԶՈՅԳ ՎԱՍՏԱԿԱՒՈՐՆԵՐՈՒ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայադիտութիւնը եւ հայ բանասիրութիւնը երկու մեծ կորուստներ արձանագրեցին 1968ի առաջին ամիսներուն, Վիեննական Միութեան Միաբանութեան զոյգ վաստակաւորներու մահով:

Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան († Յունուար 20) և Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան († Փետր. 25) մարեցան արդարներու խաղաղ նինջով, բանասիրական խոշոր վաստակով բեռնարար զանձարան մը թողլով մեզի՝ իրր ժառանգութիւն, իրենց բազմամեայ զոհողութիւններու, անբասիր ու ճշմարտութեան վանականի եւ ժրջանի գիտնականի քրտինքով օծուն:

Աշխատանքի մէջ եղբայր, աղօթքի եղբայր, մահով ալ եղբայրացան անոնք, իրր հարազատ ամուսինը արդարներու թէեւ զործունէութեան տարբեր գաղտերու մէջ փորեցին այլազան ախօսներ, առաջինը՝ հայ արժէքները Եւրոպայի հիւսիսային Ժողովուրդներուն մէջ առաւելապէս ծանօթացնելու նպատակով, երկրորդը՝ նուիրուած բուն հայ բանասիրութեան անդրադոյն նուաճումներուն, սակայն եկան միասնաբար ամբողջացնելու նուիրական եւ օգտաշատ ծրագիր մը:

Հանդուցեալ զոյգ վաստակաւորները՝ կարծէք՝ համադրական խորհրդանիշն եղան արտասահմանի մէջ բոյն դրած հայադիտական կաճառի մը երկճիւղ նկարագրին, որ Միութեան Միաբանութեան հինաւորեց ոգին է, Աւգերեաններու եւ Տաչեաններու, Ալիշաններու եւ Ակինեաններու ջանքերով նուիրականացած:

Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան՝ առաւելապէս «Ինգլիզ»ին ու «ալաման»ին արտերուն մէջ է նետած սերմերն հայկական մշակոյթին, Եւրոպայի ցոյց տալու համար հայ պատմութեան, հայ գրականութեան ու արուեստին զօրութիւնը կենսաւէտ: Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան՝ հայրենի ոսկեղէն դաշտերէն քաղած է պետութեան արեւահամ, հայ բանասիրութեան բաղինին ձօնելու համար մեր բերքը յուսով, հինաւորեց մեր փառքերուն եւ բարքերուն, վանքերուն եւ մաքաղաներուն յաղթապանձ ոգեկոչումով:

Հայ մշակոյթի պահակներն էին անոնք՝ Եւրոպայի սրտին վրայ, հայ սրբազան զանձերու երգուեալ մշակներն էին անոնք՝ օտար կայսրութեան մը կուրծքին թառած, որոնք հակառակ իրենց մարմնական տկար ու հիւանդոտ կազմին, իրր «եղբայր յեղբորէ օգնեալ»՝ անառիկ բերդ մը կառուցին, հայ «սրբութիւններու սրբոց»ը:

Գաղափարի եղբայրներ էին անոնք, Միութեան զաղափարականի կրակով խանդավառօրէն սիրարծարծ, որոնք հիւսիսային հայրենիքի մահաբեր ծաղիկներ:

Անոնց լուսաշող օրինակը, անտարակոյս, պիտի հրահրէ նորանոր սերունդներ՝ շարունակելու համար ոգեւին անոնց կտակած աշխատանքը, խորացնելու համար ախօսները սրբաբոյր:

Յիշատակի այս հակիրճ ոգեկոչումը, իրր եղբայրական սիրաջերմ ծաղիկփունջ, թող դառնայ աղօթք ու մաղթանք

6. Տիեզ. Ժողովը կը յիշէ Ս. Բարսեղ, Լակտանտիոս, Ս. Օգոստինոս, Մեծն Գրեգոր, Ս. Բոնաւենտուրա, Մեծն Ալբերտ. (Հմմտ. «Եկեղեցի» 10):

7. Բարոյական այս սկզբունքը իր ամէնէն աւելի զննական բանաձեւումին կը հասնի «Populorum progressio» կոնգրակին մէջ, ուր, ի միջի այլոց, կը հաստատուի. «Ամէն ուրիշ իրաւունք, ինչ տեսակի ալ ըլլայ, նաեւ սեփականութեան եւ արտ վաճառականութեան, են-

թարկուած են ասոր (այսինքն՝ այն իրաւունքին, զոր ամէն մարդ ունի՝ վայելելու երկրի բարիքներէն): Անհատական սեփականութիւնը ոչ մէկուն համար անպայմանաւոր եւ բացարձակ իրաւունք մըն է: Ոչ ոք իրաւունք ունի տարաբնորոշ իր զործածութեան վերադասելու՝ ինչ որ կարօտութիւններու սահմանէն դուրս է, երբ անդին ուրիշներ կարօտ են անհրաժեշտին» (Pop. progr. Թ. 23-25, ընդգրկուածները մեղմէ):

սրտագին, հայրենի արեւին քաղցր ջերմութեամբ օծելու օտարութեան մէջ ինկած ցուրտ հողակոյտերը մեր եղբայրակից ու սիրելի լուսահոգի զոյգ վաստակաւորներուն:

* * *

Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան, ծնած Արդուին (1897), մկրտութեան անունով՝ Էմանուէլ, Հ. Ներսէս Վ. Ալիքեանի ձեռքով կ'անցնի Վիեննայի Միխայիլեան վանքը (1912), ուր կ'ուսանի եւ կրօնաւորութեան կը նուիրուի (1917), կ'օտարուի քահանայական սուրբ օծութեամբ (1921), եւ հուսկ՝ Վիեննայի Պետ. Համալսարանէն կը պսակուի աստուածաբանութեան Վարդապետի (Doctor) տիտղոսով (1931):

Հակառակ իր առողջական տկարակազմ պայմաններուն, որոնք այդ շրջանին իսկ երեւան կու գան եւ պիտի յանգէին մինչեւ իսկ կուրուքեան, որմէ կը տառապէր ծերութեան շրջանին, Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան մեծ զոհողութեամբ օգտագործած է իր ժամանակը՝ ի սպաս Միաբանութեան, հոգիներու եւ հայագիտութեան:

Միաբանութեան սեմէն ներս՝ տեւականօրէն վարած է պատասխանատու պաշտօններ. Ընդհանուր Վարչութեան անդամ ու խորհրդական (1931էն յմահ), Միխայիլեան Ընծայարանի Տեսուչ (1931-1948, 1954-1960), վանքի Մեծաւոր (1948-1954, 1960-1966), մնալով միշտ Վիեննա:

Վանական օրագրութիւններուն մէջ, Հ. Վահան Վրդ. Ինգլիզեանի անունը երախտագիտութեամբ արձանագրուած է՝ իր կատարած բազմադիմի վաստակով, ի պաշտպանութիւն վանքի շահերուն, մանաւանդ քաղաքական վերիվայրումներու ահարկու օրերուն, Հիթլերեան բռնադրաւորներու տխուր շրջանին:

Բազմաթիւ հայ ընտանիքներ ալ, այսօր աշխարհի զանազան կողմեր ցրուած, չբնորոշապարտ զգացումներով պիտի յիշեն լուսահոգի վարդապետը, որ պահպան հրեշտակ է եղած իրենց համար, պատե-

րագմի կրակներուն տակ, միխայիլեանութիւն եւ ազդու օգնութիւն ջամբելով, տուն եւ դործ հայթայթելով, եւ հուսկ՝ տեղաւորելով զիրենք անքոյթ վայրեր:

Պիտի յիշեն զինք նաեւ անթիւ հաւատացեալներ, նոյնիսկ աւստրիացի զիտնականներ ու ակադեմիականներ, որոնք հոգեկան լոյս եւ առաջնորդութիւն են ստացած անոր հոգեկից խորհուրդներէն եւ թեթեւեռանքներէն:

Այս բոլորին վրայ կու գայ աւելնալ բանասէրի մեծ վաստակը: Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան՝ Ալիքեանի աշակերտն ու յաջորդն էր. կը յուսայինք թէ գոնէ տասնեակ մը տարիներ եւս պիտի կարենար առաջ տանիլ բազմալսատակ ուսուցիչին դործն եւ ուղղութիւնը: Աւա՛ղ...:

Ընծայարանի Տեսուչի, ինչպէս նաեւ բնական ձիրքերու բերումով, իրեն յանձնուած էր աստուածաբանական նիւթերու դասաւանդութիւնը. արդարեւ, այդ ուղղութեամբ՝ մեծ ու հեղինակաւոր հմտութիւն էր ձեռք բերած, մանաւանդ դաւանական ու ծիսապատմական հարցերու ուսումնասիրութեան մէջ: «Երեզլիսեան» վէճերու մասին, իր պրպտումները, «Երեքսրբեան» երգի նկատմամբ կատարած ստուգումները, «Պատարագամատոյց»-ի մասին բնագրական գիտողութիւնները, բոլորն ալ իսկապէս խորունկ եւ արժէքաւոր յօդուածաշարքեր էին, առաջինը միայն զրքի ձեւով արտատպուած, ուր շատ հմտալից անդրադարձումներ եւ յաճախ հիմնական լուծումներ կը տրուին էական հարցերու:

«Մատենագիտական տեղեկութիւններու» շարքերը, 1934-1936, գերմանական ճշգրտութեամբ ու բծախնդրութեամբ յօրինուած, դժբախտաբար չունեցան շարունակութիւն:

Ստորագրած է նաեւ գրախօսականներ, թէեւ սակաւաթիւ, սակայն՝ խոր ու ներհուն, ընտրելով միշտ հայագիտական արժէքաւոր նիւթեր:

Ունի թարգմանութիւններ՝ Պատմերէն, Ազոնցէն. բնագրական քանի մը հատուածներու հրատարակութիւններ՝ իր

վերջին դործերէն եղան. նախանձախնդրօրէն կը հոգար եւրոպացի հայագէտներու մահագրական բաժինը:

Բայց հանդուցեալին գլխաւոր վաստակը, ինչպէս արդարացիօրէն վեր կը հանէ «Հանդէս Ամսօրեայ»-ի խմբագրութիւնը, առաւելապէս գերմաներէն լեզուով է լոյս տեսած՝ Եւրոպայի հայագիտական շրջանակներու ուղղուած:


Գերմանական ու աւստրիական բազմաթիւ համայնագիտարաններու, գիտական ու կրօնական կամ հայագիտական պարբերաթերթերու նիւթ ընձեռած է՝ Հայաստանի, հայ հին ու նոր մատենագրութեան, հայ եկեղեցւոյ պատմութեան, վանքերու, դաւանաբանութեան, ծիսական հարցերու, նոյնիսկ հայ գիցարանութեան մասին. հարիւրաւոր էջեր, ուր ոչ միայն բիւրեղացած է մեր հաղարամեայ մշակոյթը՝ իր բազմակի ճիւղերով, այլ շատ անգամ կը ներկայացուին բարդ հարցեր՝ նորագոյն վերլուծումով եւ յստակումով, ինչպէս քաղկեդոնականութեան պատմութեան նուիրուած ուսումնասիրութեան մէջ. ունի, սակայն, մերթանհատական վիճելի տեսութիւններ, մանաւանդ 1700ական շրջանի քանի մը հարցերու շուրջ, որոնց մասին զրելու առիթն ունեցած ենք ժամանակին:

Միխայիլեան Վրդ. մասին ընդարձակ կենսագրութիւն մը՝ իր անդրանիկ աշխատութիւնն է եղած գերմաներէն. յաճախ, յորելինական տարեդարձներու առիթով, հրատարակած է գերմաներէն զրքոյկներ՝ Միխայիլեան, յատկապէս Վիեննական Հայրերու դործունէութեան նուիրուած:

Գերմաներէնի թարգմանած է մեր պատարագը, Կորինի «Վարք Մաշտոցի»ն:

Իր գլխաւոր աշխատութիւնը պիտի մընայ «Հայաստան Ս. Գրքի մէջ» հատորը, 250 էջոց ընդարձակ ու թանկարժէք ուսումնասիրութիւն մը, որ լոյս տեսած է նախ գերմաներէն:

«Հանդէս Ամսօրեայ»-ի պատուարժան խմբագրութիւնը, ազնւօրէն, ժամանակագրական մանրամասն ցանկն է տուած



Հ. Վահան Վրդ. Ինգլիզեան

հանդուցեալին բոլոր աշխատութիւններուն (ԶԲ. տարի, 1968, Թ. 1-3, սիւնակ 11-15), ուր կը նշմարուին նաեւ անտիպ նիւթեր, մանաւանդ՝ գիւտական հաւաքածոներու մեծ առաջ մը, պատուական կտակ՝ աշխատանքի ժառանգներուն:

Հ. Վահան Վրդ. Ինգլիզեանի մահով, ահա՛, հայ բանասիրութիւնը կը կորսնցնէ ընտիր գեապան մը, որուն հսկայ վաստակը առաւելապէս սփռուած ու ծածկուած պիտի մնայ համայնագիտարաններու ստուար հատորներուն մէջ, ուր յաճախ ստորագրողին անունին եւ մականունին լոկ սկզբնատուերը կ'երբերին: Հիմնական, զնահատելի ու կարեւոր աշխատանք մը՝ Հ. Վահան Վրդ. Ին-

գլխիդեանինը, ի սպաս հայագիտութեան, իր անձին ու սեփական պատկերին ի սպաս հրաժարումով:

Եւ այս լուռ աշխատանքը միթէ չի՞ յիշեցներ աւետարանական ցորենահատին առակն սքանչելի... հատիկին մահով՝ հայագիտութեան յաւերժաճաղիկը պիտի ծլի:

Յանուն բովանդակ հայութեան, յարգանքով կը խոնարհինք քու յիշատակիդ ու վաստակիդ առջեւ, լուսահոգի՝ Վարդապետ:

* * *

Հ. Համադասալ Վրդ. Ոսկեան, Խոտրը-Նուրի Խնդածոր գիւղէն (1895), հաղիւ տաներկու խնդալից դարուններ սրտին՝ կը մտնէ Վիեննայի Միթարեան վանքը (1907): Ուսում եւ աղօթք շուտով կ'առնինքնէն պատանի Անտոնը, որ ուսումնական յաջող շրջանէ մը ետք՝ ուխտերով կ'անդամակցի Միարանութեան (1914), կը քահանայանայ (1919) եւ շուտով կը պսակուի «Վարդապետ աստուածաբանութեան» տիտղոսով՝ Վիեննայի Պետ. Համալսարանէն (1922):

Այնուհետեւ, շուրջ յիսնամեակ մը ամբողջ՝ նուիրում եւ աշխատանք. ա՛յս է եղած Հ. Համադասալ Վրդ. Ոսկեանի կարգախօսը եւ կեանքը համակ: Մտային արտակարգ կարողութիւններու տէր մէկը չէր անիկա, կը վկայեն իր հոգեկիցները. բայց արտակարգ նուիրում եւ աշխատասիրութիւն ունէր, որուն պտուղները իսկապէս ամէն գնահատանքէ վեր են:

Բանասիրական 26 հատոր հրատարակութիւն (աւելի քան 6.000 էջ), որոնցմէ 20 հատը անցած են «Ազգային Մատենադարանի» շարքերուն, նախապէս հրատակուած՝ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ. դասադրքային 9 հատոր (Ընթերցարաններ եւ «Հայոց Պատմութիւն»): մանկավարժական 7 հատորիկ, ձեռագրական մանր ցուցակներու նուիրում 19 յոգում, հայագիտական նիւթերու շուրջ

գրախօսականներ՝ 46 հատ, այլ յոգումներ՝ 18 հատ, որոնց բոլորին լրիւ ու մանրամասն ցուցակը կու տայ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը (անդ, ԶԲ. տարի, 1968, Թ. 1-3, սիւնակ 34-45). ունի նաեւ յոգումներ «Ուսումնարան», «Հայրենիք», «Մասիս», «Ակօս», «Յուսարեք» թերթերուն մէջ:

Ահա՛ Հ. Համադասալ Վրդ. Ոսկեանի թանկագին վաստակը, զոր կրնանք երկու տեսակի բաժնել (ու ենթաբաժնել), համապատասխան՝ իր կեանքի զանազան շրջաններուն. պատմա-բանասիրական ու մանկավարժական:

1920-28, բանասիրական պատրաստութեան շրջանն է, վանքին մէջ, ուր կը հասունանա առաջին պտուղները իր աշխատանքին. լոյս կը տեսնեն ուսումնասիրութիւններ՝ Յովհաննէս Վանականի եւ իր դպրոցի մասին, ուր կը տողանցեն Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի եւ Մաղաքիա արեղայ. կը յաջորդէ Երզնկոցի առաջին եւ երկրորդ թարգմանութեան շահեկան քննութիւնը, ապա մատենագրական խուզարկումներ՝ Յովհաննէս Սարկաւազի, Ս. Ներսէս Լամբրոնացիի եւ Միթար Գօշի մասին. շրջանն կը փակուի Եղիա Աստուածատուր-Մուշեղեանի եւ իր գրական արտադրութեան նուիրում մենագրութեամբ: Այս շրջանին, գլխաւոր աշխատակիցն է «Հանդէս Ամսօրեայ»ի վաստակաւոր խմբագրապետին՝ Հ. Ներսէս Վրդ. Ակինեանի, եւ ասոր առաջնորդական շունչին տակ կը կազմաւորուի ապագայ բանասէրը: Կը ստորագրէ գրախօսականներ եւ այլ յոգումներ: Մեծանուն Տաշեանի հոգածութեամբ կը ձեռնարկէ շարունակելու վանքի ձեռագրական հաւաքածոյին ցուցակագրութիւնը:


1928ի աշնան՝ զինք կը գտնենք Ֆիլիպի, Միթարեան նորարաց վարժարանին իրր ուսուցիչ, ու տնօրէն (1931-37): Նուիրում մանկավարժական ասպարէզին՝ կը պատրաստէ «Շողակաթ» ընթերցարաններու շարքերը. 1932ին՝ կը ձեռնարկէ «Ուսումնարան» թերթի հրատա-

րակութեան, դաստիարակիչ ու ազդաշունչ ողիով խօսակցելու նոր սերունդին հետ: Միաժամանակ կը զբաղի Պուլիարիոյ մէջ ցրուած հայերէն ձեռագիրներու ցուցակագրութեամբ: Կը պատրաստէ Հայոց Պատմութեան դասագրքերու շարք մը:

1937-47 կը մնայ Վիեննա, վանքին դործակալի պաշտօնով: Կը ձեռնարկէ հայ վանքերու ուսումնասիրութեան. սկսելով Վասպուրական նահանգէն, կ'անցնի դաւառէ դաւառ, քովէ քով բերելու յիշատակարաններ, պատմական վկայութիւններ, արձանագրութիւններ, դաւադանացանկեր. ընդամէնը 1127 էջ, երեք հատորով: Կը յաջորդէ «Սեբաստիայի վանքերը» հատորը: Ատաղձ կը հաւաքէ միւս նահանգներու վանքերու մասին, կը հրատարակէ «Սարգիկէի ժողովքի հայերէն կանոնները», Ս. Ներսէս Լամբրոնացիէն ձուներ:

1947-60 կը պաշտօնավարէ Պէյրութի Միթարեան վարժարանին մէջ՝ իրր մեծաւոր ու տնօրէն: Պատասխանատու պաշտօնին առնթեր, մէկ կողմէն կը հրատարակէ մանկավարժական երկեր՝ ուր գրական որոշ յատկութիւններ եւ բանաստեղծական երանգ մըն ալ կը յայտնէ, միւս կողմէ՝ առիթ չի փախցնէր ուսումնասիրելու եւ ցուցակագրելու Պէյրութի կամ Զահլէի մէջ հանդիպած ձեռագիրներ: Անդին, Վիեննայի մէջ, միաժամանակ լոյս կը տեսնեն Բարձր Հայքի, Տարօն-Տուրուբերանի, Կարինի, Արցախի, Գուդարքի եւ Կիլիկիոյ վանքերու պատմութիւնները: Միեւնոյն շրջանին, նոր նիւթով մը եւս հրապարակ կ'իջնէ Հ. Ոսկեան. հայ նախարարութիւններու ու սովետասիրութիւն. Գնունի, Ռչտունի, Խորխոռունի, Ամատունի եւն... տոհմերու մասին պատմաքննական հատորներ են՝ որ լոյս կը տեսնեն Վիեննա, մինչ ինք իրր Տնօրէն կը պաշտօնավարէ Պէյրութ:

1960ին վերջնականապէս կը վերադառնայ Վիեննա. տկար է, առողջութեամբ հիւժած եւ հետզհետէ աւելի հիւանդա-



Հ. Համադասալ Վրդ. Ոսկեան

զին: Անոր հակառակ՝ նոր թափ կ'առնէ իր բանասիրական վաստակը, կարճէք՝ երիտասարդական կորովով, միշտ աւելի կենսունակ՝ մինչեւ մահուան անկողինը:

1962ին լոյս կը տեսնէ Սեբաստիոյ (Բ. մաս), Սարբերդի եւ Տրապիզոնի վանքերու նուիրում հատորը:

1963ին, Հ. Ներսէս Վ. Ակինեանի մահէն ետք՝ խմբագրապետ կը կարգուի «Հանդէս Ամսօրեայ»ի: Նոյն տարին, լոյս կը տեսնէ Վիեննայի Միթարեան Մատենադարանի ձեռագրացուցակին Բ. հատորը (1156 մեծադիր էջ), Լիզպոնի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» ազնիւ նպաստով: 730 ձեռագրի նկարագրութիւն բովանդակող այս հո-

յակապ հատորը (թ. 574-1304), իր բազմատեսակ ու մանրամասն ցանկերով, Հ. Համազասպ Վրդ. Ոսկեանի 40ամեայ աշխատանքին կոթողն է ու գլուխ-գործոցը:

1963-ին ասելին, ան տակաւին կը շարունակէ ժրօրէն գրել: «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ կը ստորագրէ 52 յօդուած, վերջին երկուքը՝ այն թիւին մէջ, ուր գետեղուած է իր ընդարձակ մահադրականը. կը հրատարակէ 5 հատոր գիրք (երկուքը՝ դարձեալ «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» նպատակով). թարգմանութիւն մը՝ Լեհահայերու եւ անոնց Անդրէաս արքեպս.ի մասին (հեղ. Օրբերտինսկի Զ.), Ստեփանոս Ռոչքայի «Ժամանակագրութիւն»ը, Յովհաննէս Ղրիմեցիի «Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ», ուսումնասիրութիւն չորս հայ տաղասացներու մասին (Յովհ. Կարնեցի, Գրիգոր Օշականցի, Մովսէս Կարնեցի, Մատթէոս Ղրիմեցի) ու ընդգրկներ, դարձեալ Ստեփանոս Ռոչքայի եւ Մատթէոս Զուղայեցիի մասին:

Ուրեմն, Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան կ'իյնայ գրելը ձեռքին, հաւաքածոյ մեծատաղձ մըն ալ կտակելով՝ Այրարատի եւ Սիւնիքի վանքերու, Կանոնագրքի բնագիրներու մասին, եւն...: Հսկայ է անոր վաստակը եւ բազմակողմանի:

Անշուշտ, այսքան արագ աշխատողը, եւ աւելի արագ հրատարակողը՝ չի կրնար շատ խորանալ իր աշխատութիւններուն մէջ. շատ անգամ, հաւաքած նիւթերը հազիւ դասաւորած՝ մամուլին յանձնելու ստիպողականութիւնը տուժել կու տայ գործին. նոր նիւթերու կուտակումը թոյլ չի տար իրեն՝ հինքը խորացնելու, պատմական լրիւ համադրութիւններ կատարելու, քննական անաչառ մաղէ անցընելու ատաղձը, մանաւանդ ձեռագրացուցակները ձոխացնելու բանասիրական բազմալիսի տեղեկութիւններով: Միւս կողմէ, նկատելու է որ կը թաւան ու դաստիարակչական գործերու նըւիրումը, դպրոցներու մէջ կատարած ուսուցչական եւ տեսչական պաշտօնները՝ խլած են Հ. Համազասպ Վրդ. Ոսկեանի

բանասէրի կեանքին կէսը, ամբողջ 22 տարի:

Ակնարկուած թերութիւնները, հետեւաբար, երբեք չեն նսեմացներ անոր անդուգական ու ճոխ վաստակը, որ ոսկեղէն վալլ ունի եւ անթառամ արժէք:

Ձեռագրացուցակի քուրմն է անիկա, ամէնէն առաջ, որուն ժիր ձեռքն ու աչքը հասած է Աւստրիայէն մինչեւ Լիբանան, Ձեխոսլովաքիայէն Պուլիարիա, Թիւրքիայէն մինչեւ Պարսկաստան, միշտ անծանօթ մազադաթներ յայտնաբերելու եւ հրատարակելու տենչով:

Բնագրական հրատարակութիւններն ալ, թէեւ համեմատաբար սակաւաթիւ, առանձին արժէք կը ներկայացնեն, անտարակոյս:

Հնամենի հայ վանքերու անքուն կոչնակահարն է Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան, որ աւերակներու մէջէն յարուծել է տուած հարիւրաւոր մենաստաններու, սրբարոյր ճգնարաններու, արչաւելով նահանգէ նահանգ, նոյնիսկ Հայաստանէն դուրս՝ մինչեւ հեռաւոր դաղթաւայրեր: Գտած է արձանագրութիւններ, համբուրած է մամուլապատ խաչքարեր եւ նշխարներ նուիրական, որոնց յաճախ հազիւ հետքերն են մնացած:

Մեր օրերու խորհրդաւոր տեսանկյուն է անիկա, որ ոչ միայն վանքեր, այլ նաեւ միջնադարեան սրբազան դէմքեր, մեկնիչներ, պատմագիրներ, տաղասացներ դուրս է բերած՝ դրադարաններու խաւար խորշերէն, գետեղելու համար լուսաշրնորս շրջանակներու մէջ:

Նախարարական ամբողջ տուններ, իրենց տոհմածառերով ու պատմական դիւաններով համախմբուած են հիմա նորաչէն բերդերու եւ ամրոցներու մէջ՝ դոր կառուցած է Հ. Համազասպ վարդապետ, մեր օրերու այս նոր նախարարը, Խոտորջուրի Ոսկեան տոհմէն:

Երկու անգամ տեսած էինք զինք. նախ՝ 1947ին. «Բաղմալէպ»ի հարիւրամեակի հանդէսներուն՝ Վենետիկ եկած էր ու խանդավառ ճառ մը խօսեցաւ. քանի մը

օր ետք՝ միասին ճամբորդեցինք մինչեւ Հռոմ: Հոգեւոր վարդապետ, ջերմ ազգասէր, բաղմամբ ու գիտնական. այս էր մեր առաջին տպաւորութիւնը՝ Հ. Համազասպ Վրդ. Ոսկեանի մասին: Հռոմ եղած շրջանին, օր մը, տաղնապած մեզի եկած էր՝ այդ շրջանին կը պատրաստէր Անաէր՝ հանրակառքին մէջ, գրելը... Թրոցուցեր էին: Հ. Համազասպ, ուրեմն, առաջնից գրելի էր մնացած. մեծագոյն կորուստը՝ վարդապետին համար. չէր կրնար հաշտուիլ այդ դաժան իրականութեան հետ: Գրել մը բերինք. ուրախացաւ. շնորհակալ ըլլալու ժամանակ իսկ չունեցաւ. նոր նիւթեր ունէր՝ թուղթին յանձնելիք:

Երկրորդ անգամ իրեն հանդիպեցանք Վիեննա, 1960ի Օգոստոսին. շատ տկար ու հիւանդկախ վիճակ մը ունէր. հազիւ ճանչցանք զինք. չէինք կարծեր որ ութը տարի եւս կարենար ապրիլ. եւ ինչպիսի՞ տարիներ: Ու Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան, կեանքը ծայրէն սկսածի պէս, վերարուժական ծանր դարմանումներէ ետք,

զրեց անդադար ու արտադրեց: Երբեմն նամակներ կը ստանայինք. խնդրանքներ. ստուգել Թրիեստ տպուած այնինչ հայատառ թիւրքերէն գրքին խորագիրը, էջահամարը, այն միւս նկարը... Կը ջանայինք շուտով գոհացնել զինք. չնչին ծառայութիւնները՝ մեծ գովեստներով կը պնդատէր «Հանդէս Ամսօրեայ»ին մէջ. իսկական գիտնականի վարմունք, որով աւելի եւս սիրելի ու պատկառելի կը դառնար:

Եւ յանկարծ՝ մահադոյժ նամակը, որ հարուածեց բոլորս. չէինք հաւատար:

Հայագիտութեան պատնէչին վրայէն կը տապալէր անիկա, զէնքը ձեռքին:

Կը հաւատանք թէ Հ. Համազասպ Վրդ. Ոսկեանի կուրծքին, Սուրբ Աւետարանին հետ՝ այդ զէնքն ալ գետեղեցին, իր գրելը. պաշտամունքի երկու նուիրական առարկաները այդ անխոնջ մշակին:

Յարգա՞նք յիշատակիդ, պատի՛ւ քու բարի անունիդ ու մեծ վաստակիդ, Խոտորջուրի Ոսկեան տոհմէն՝ լուսահոգի Հ. Համազասպ վարդապետ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

